

Informationsverein Lentia and others v. Austria, 1993, (Application no. 13914/88; 15041/89; 15717/89; 15779/89; 17207/90), Ինֆորմեյշնավերեյն Լենտիա և այլք ընդդեմ Ավստրիայի(Մարդու իրավունքների եվրոպական դատարան)

Թեմա: հեռարձակման լիցենզավորում

Ենթաթեմա: պետական մենաշնորհներ

Թեսթը: անհրաժեշտությունը

Սանկցիան: լիցենզավորման արգելք

Վճիռը: արտահայտվելու ազատության իրավունքի խախտում

Իրավասությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Ավստրիա

Գործի փաստական հանգամանքները.

1978թ. Առաջին դիմումատուն դիմել է ռեգիոնալ փոստի և հեռուստահաղորդակցության մարմնին փակ հեռուստատեսային կաբելային ցանց ստեղծելու նպատակով լիցենզիա ստանալու համար, որի հաղորդումները նախատեսված էին միայն իր անդամների իրավունքներին առնչվող հարցերը լուսարանելու համար: 1979թ. Ազգային փոստի և հեռուստահաղորդակցության մարմինը վերջնականապես մերժեց դիմումը այն հիմքով, որ լիցենզիայի տրամադրման համար առկա չէին որևէ իրավական հիմքեր: 1983թ. Սահմանադրական դատարանը մերժեց վճռի դեմ բերված բողոքը: Սահմանադրական դատարանի կարծիքով Հեռարձակման մասին սահմանադրական օրենքը սահմանել է լիցենզավորման համակարգ՝ 10-րդ հոդվածի 1-ին մասին վերջին նախադասության իմաստով: Համակարգը նպատակ ուներ ապահովելու կարծիքների օբյեկտիվությունն ու բազմազանությունը և անարդյունավետ կլիներ, եթե յուրաքանչյուրը հնարավորություն ունենար լիցենզիա ձեռք բերելու: Փաստորեն, հեռարձակման իրավունք ուներ միայն Ազգային հեռարձակող կորպորացիան, քանի որ առկա չի եղել որևէ այլ օրենսդրություն բացի Կազմակերպության գործունեությունը կարգավորող օրենսդրության:

1987-1989թթ. ընթացքում երկրորդ դիմումատուն աշխատում էր մի ծրագրի վրա՝ այլ անձանց հետ մասնավոր ռադիոկայան հիմնելու նպատակով այլ անձանց հետ: Այնուհետև, վերջինս որոշում է չիրականացնել իր ծրագիրը, երբ ուսումնասիրությամբ բացահայտում է, որ գործող օրենսդրության համաձայն՝ Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ, հնարավոր չէր լինի ձեռք բերել անհրաժեշտ լիցենզիան: Երրորդ դիմումատուն Ավստրիական կազմակերպություն է, որը նախատեսում էր ռադիոկայան, որը պետք է հեռարձակեր ոչ կոմերցիոն ծրագրեր գերմաներեն և սլովեներեն լեզուներով: 1988թ. Այն լիցենզիա ստանալու համար դիմեց համապատասխան իրավասու մարմիններին, որոնք մերժել են լիցենզիայի տրամադրումը: Այդ որոշումները հաստատվել են Սահմանադրական դատարանի կողմից 1991թ. : Չորրորդ դիմումատուն Իտալական ընկերության բաժնետեր է, որը առևտրային ռադիոյի հիմնադիրն է, որը հաղորդումներ է հեռարձակում Ավստրիա և ցանկանում է նույն գործունեությունը իրականացնել նաև Ավստրիայում: Նա համապատասխան լիցենզիա ստանալու նպատակով դիմում է համապատասխան իրավասու մարմիններին, սակայն մերժում է ստանում, ընդհուպ մինչև Սահմանադրական դատարան:

ՄԻԵԴ-ի վերլուծությունն ու եզրակացությունը.

Դիմումատուները գանգատվում էին, որ նրանք հնարավորություն չեն ունեցել հիմնադրելու ռադիոկայան կամ հեռուստակայան, քանի որ Ավստրիական օրենսդրության համաձայն՝ այս իրավունքը վերապահված էր միայն Ավստրիական Հեռարձակող կազմակերպությանը: Դիմումատուները պնդում էին, որ դա հանգեցրել է մենաշնորհի, որը համատեղելի չէ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հետ:

Դատարանը ընդհանրապես չէր համաձայնում, որ վիճարկվող սահմանափակումներով միջամտություն է ցուցաբերվել դիմումատուների՝ տեղեկատվություն և գաղափարներ փոխանակելու իրավունքին: Միակ հարցը, որին անհրաժեշտ է պատասխանել այն է, թե արդյոք այդ միջամտությունը արդարացված էր, թե ոչ: Այն հանգամանքը, որ դիմումատուներից երկուսը ընդհանրապես չեն դիմել հեռարձակման լիցենզիա ստանալու համար, որևէ նշանակություն չունի, նրանք պետք է դիտվեն որպես զոհեր:

Դատարանը հիշեցնում է, որ 10-րդ հոդվածի երրորդ նախադասության առարկան և նպատակը, ինչպես նաև դրա կիրառման շրջանակը պետք է դիտվի ամբողջ հոդվածի համատեքստում, մասնավորապես երկրորդ մասի պահանջների հետ կապի մեջ, որոնց պետք է ենթակա լինեն լիցենզավորման միջոցները: Հետևաբար, անհրաժեշտ է գնահատել, թե արդյոք սահմանված կանոնները համապատասխանել են այս երկու դրույթներին էլ:

10-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ նախադասությունը.

Ինչպես, որ Դատարանը արդեն սիկ նշել է այլ գործերով, վերոգրյալ դրույթի նպատակը, այն է, որպեսզի հստակեցվի, որ պետությունները կարող են լիցենզավորման համակարգի միջոցով կարգավորելու իրենց տարածքներում հեռարձակման կազմակերպումը, հատկապես տեխնիկական ասպեկտները: Տեխնիկական ասպեկտները անհերքելիորեն կարևոր են, սակայն լիցենզիայի տրամադրումը կամ մերժումը կարող է նույնպես պայմանավորված լինել այլ հանգամանքներով, այդ թվում, այնպիսիք, ինչպիսիք են առաջարկվող ծրագրի բնույթն ու նպատակները, դրա պոտենցիալ հանդիսատեսն ու ունկնդիրը ազգային, ռեգիոնալ և տեղական մակարդակով, առանձնահատուկ հանդիսատեսի իրավունքներն ու կարիքները, միջազգային համաձայնագրերից բխող պարտավորությունները: Այս ամենը կարող է բերել միջամտության, որի նպատակները իրավաչափ կարող են համարվել առաջին մասի երրորդ նախադասության լույսի ներքո, թեև չհամապատասխանել երկրորդ մասով սահմանված որևէ նպատակի: Ավստրիայում հաստատված մենաշնորհային համակարգը ունակ է բարելավելու հաղորդումների որակն ու հավասարակշռությունը՝ լրատվամիջոցների նկատմամբ իշխանությունների ունեցած վերահսկողական լիազորությունների շնորհիվ: Տվյալ գործի պարագայում այն համապատասխանում է վերոգրյալ երրորդ նախադասությամբ ամրագրված դրույթին, մնում է որոշել, թե արդյոք այն բավարարում է նաև հոդվածի երկրորդ մասի պահանջները:

10-րդ հոդվածի 2-րդ մաս

Վիճարկվող միջամտությունը սահմանված է եղել օրենքով, որի նպատակը իրավաչափ է, ինչպես, որ արդեն իսկ նշել է Դատարանը: Անհրաժեշտ է որոշել, թե արդյոք միջամտությունը “անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում”:

Անդամ պետությունները հայոցողական լուսանցք ունեն միջամտության անհրաժեշտությունը գնահատելու համար, բայց այց հայեցողությունը զուգակցվում է Եվրոպական վերահսկողությամբ, որի աստիճանը կարող է տարբեր լինել կախված գործի հանգամանքներից: Այս գործին նման գործերում, որտեղ միամտություն է դրսևորվում 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքներին, վերահսկողությունը պետք է խիստ լինի ելնելով վիճարկվող իրավունքների կարևորությունից: Սահմանափակման անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հաստատվի:

Դատարանը հաճախ ընդգծել է արտահայտվելու ազատության իրավունքի հիմնարար դերը ժողովրդավարական հասարակությունում, մասնավորապես, երբ մամուլի միջոցով այն ծառայում է ընդհանուր շահերին վերաբերող տեղեկատվության և գաղափարների փոխանակմանը, որը հասարակությունը իրավունք ունի ստանալու: Նման հանձնառությունը չի կարող իրականացվել, քանի դեռ այն հիմնված չէ քաղաքացիական սկզբունքի վրա, որի վերջնական երաշխավորը պետությունն է: Այս նկատառումը հատկապես կարևորվում է տեսալսողական լրատվամիջոցների համար, որոնց հաղորդումները հաճախ լայնորեն հեռարձակվում են:

Պետական մենաշնորհը այն եղանակն է, որն առավելագույն սահմանափակումներ է ենթադրում արտահայտվելու ազատության իրավունքի նկատմամբ, մասնավորապես, ենթադրում է հեռարձակման բացարձակ անհնարինություն, բացի ազգային հեռուստակայանի և որոշ շատ սահմանափակ դեպքերում տեղական կաբելային կայանների միջոցով: Այս սահմանափակումների հեռուն գնացող բնույթը նշանակում է, որ դրանք կարող են արդարացվել միայն եթե դրանք համապատասխանում են ճնշող հասարակական կարիքին:

Վերջին տասնամյակների ընթացքում արձանագրված տեխնիկական առաջընթացի արդյունքում այս սահմանափակումների արդարացումը այլևս չեն կարող լինել հաճախությունների և ալիքների թվաքանակի հետ կապված հիմնավորումներում: Կառավարությունը դա ընդունեց: Երկրորդը, տվյալ գործի նպատակներից ելնելով դրանք արդեն կորցրել են իրենց ողջամիտ հիմնավորումը հաշվի առնելով արտասահմանյան հաղորդումների թվաքանակի աճը, որոնք նախատեսված են Ավստրիական հանդիսատեսի համար և վարչական դատարանի որոշումը, որով դրանց վերահեռարձակումը մալուխային ճանապարհով ճանաչվել է օրինական: Եվ վերջապես, չի կարելի պնդել, որ գոյություն չունեն այլընտրանքային ավելի մեղմ լուծումներ: Բավարար է պարզապես որպես օրինակ բերել մի քանի եվրոպական պետությունների օրինակներ, որոնք կամ լիցենզիա են տամադրում բազմազան բովանդակության ապահովման պայմանով կամ նախատեսում են ազգային հեռարձակողի գործունեությանը մասնավոր անձանց մասնակցության եղանակներ:

Դատարանը համոզիչ չի համարում Կառավարության փաստարկը շուկայի փոքր լինելու վերաբերյալ, որովհետև մի քանի Եվրոպական պետություններում, որոնք համեմատելի են չափով Ավստրիայի հետ, գործում են զուգահեռ պետական և մասնավոր կայաններ, որոնց գործունեությունը զուգակցվում է մասնավոր մենաշնորհների ձևավորման կանխարգելման միջոցներով:

Դատարանը գտնում է, որ վիճարկվող միջամտությունը անհամաչափ էր հետապնդվող նպատակին, հետևաբար անհրաժեշտ չէին ժողովրդավարական հասարակությունում:

Տեղի է ունեցել 10-րդ հոդվածի խախտում: